# ՄԵԿ ՏԱՐՈՒՄ՝ 9-Ը ԱՐԴԱՐԱՑՈՒՄ. ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԸ 2013-Ը ԱՆՆԱԽԱԴԵՊ ՏԱՐԻ Է ՀԱՄԱՐՈՒՄ

18.12.2013 13:26

Հայաստանի Փաստաբանների պալատի անդամ, Լոռու մարզի փաստաբան Ռուբեն Հակոբյանը 2013 թվականը իր գործունեության մեջ աննախադեպ տարի է համարում՝ իր վարույթում գտնվող 9 քրեական գործերով արդարացում է ունեցե, նշում է panorama.am-ը: Ընդ որում, արդարացման հասած 9 քրեական գործերից 2-ի դեպքում մեղադրող կողմն է հրաժարվել մեղադրանքից, իսկ մյուսների դեպքում դատարանն է արդարացրել Հակոբյանի մեղադրվող պաշտպանյալներին:

Ռուբեն Հակոբյանը իր վարույթում գտնվող երկու գործերով արդարացման հասել է վերջերս, երկուսն էլ մեկ օրում: Նրա պաշտպանյալ Անդրանիկ Սողոմոնյանը, որը մեղադրվել է պաշտոնեական դիրքը օգտագործելով զգալի չափի գույքի յուրացում կատարելու համար, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում դեկտեմբերի 11-ին արդարացվել է, քանի որ մեղադրող կողմը հրաժարվել է մեղադրանքից: Մեղադրյալը, որին պաշտպանել է Հակոբյանը, եղել է Արջուտ գյուղի միակ դպրոցի տնօրենը, որը նաև դպրոցի հիմնադիրն է: Մեղադրվել է դպրոցի գույքը (տեսախցիկ, սառնարան) յուրացնելու համար:

«Վանաձորի դատարանում դատաքննության ընթացքում բոլոր վկաները հարցաքննվեցին: Ընթացքում մեղադրողը փոխվեց, և այն սկսեց պաշտպանել Լոռու մարզի դատախազի տեղակալ Արծվիկ Ասատրյանը: Մեղադրողը ճառեց, և ճառի սկիզբը ոչինչ չէր խոստանում, սակայն ճառի վերջում մեղադրողը հայտարարեց, որ հրաժարվում է մեղադրանքից, քանի որ դատաքննությամբ ձեռք բերված ապացույցները իրենց համակցության, վերաբերելիության և թույլատրելիության մեջ գնահատելով, պարզվել է, որ յուրացման հանցակազմի պարտադիր տարրերից մեկը' սուբյեկտիվ կողմը հիմնավորված չէ: Եվ դատարանը կայացրեց արդարացման դատավճիռ», -Panorama.a--ի թղթակցի հետ զրույցում ներկայացրեց փաստաբան Հակոբյանը:

Նույն օրը՝ դեկտեմբերի 11-ին, Ռուբեն Հակոբյանն ունեցել է երկրորդ արդարացումը Արտավազդ Թամրազյանի գործով: Վերջինը մեղադրվում էր ինքնիրավչության մեջ: Դեպքը տեղի էր ունեցել 2011-ին, իսկ իրավապահ մարմինների դիտակետում այն հայտնվել է 2012-ին. Տավուշի մարզի Թեղուտ գյուղի բնակիչ Արտավազդ Թամրազյանը 1 մլն 200 հազարի

վառելափայտ է տրամադրում Գեղարքունիքի մարզի Մասրիկ գյուղի բնակիչ Հարութիկ Պողոսյանին, որ վաճառի ու վաճառքից գոյացած գումարը տա իրեն: Սակայն Պողոսյանը ամբողջական գումարը չի վերադարձնում, այլ՝ գումարի մի մասը, այնուհետև ավտոպահեստամասեր, կով և հորթ ու 500 հազար դրամ էլ պարտք մնում:

«Որպեսզի պարտքը չվերադարձնեն, Պողոսյանները դիմում են հարձակողական միջոցների: Ընտրությունների ժամանակ, երբ Սերժ Սարգսյանը Գեղարքունիքի մարզում նախընտրական քարոզարշավի շրջանակներում հանդիպումներ է անցկացնում, տուժողի կինը նախագահին դիմում-բողոք է տալիս, որ 7 երեխա ունենք, մեր կովը արան, մեզ ամեն ինչից զրկեցին: Դրա հիման վրա հարուցվում է քրեական գործ: Դատարանում ապացուցվեց, որ տուժող կողմը ինքն իր կամքով է տվել գույքը, և իմ պաշտպանյալ ամբաստանյալը նրա կամքին հակառակ չի տարել կովն ու հորթը», - ներկայացրեց փաստաբանը: Ավելին դատաքննության ընթացքում անցել է գործի վաղեմությունը, և մեղադրող դատախազը միջնորդել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմությամբ գործը կարճել, սակայն պաշտպանական կողմն առարկել է ու պահանջել արդարացում: Այնուհետև, երբ ընդունվել է համաներում հայտարարելու մասին ԱԺ որոշումը, մեղադրող կողմը դարձյալ միջնորդել է համաներում կիրառել, սակայն պաշտպանական կողմը պնդել է իրենը՝ պահանջելով արդարացման վճիռ: Եվ ահա դեկտեմբերի 11-ին մեղադրող կողմը իր ճառի ժամանակ հրաժարվել է մեղադրանքից, ու Արտավազդ Թամրազյանն արդարացվել է:

Օրինակ, ծանր քրեական գործերից մեկի դեպքում արդարացվածը նրա ընկերն է եղել՝ Արմեն Հարությունյանը, որը մեղադրվել է պաշտոնեական դիրքը չարաշահելու համար: Այս գործի նախաքննությունը վարել է Հատուկ քննչական ծառայությունը, իսկ մեղադրանքը հաստատել Գլխավոր դատախազությունը, իսկ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանն էլ արդարացրել է նրան: «Մեղադրողը պահանջեց երկու տարի ազատազրկում, բայց դատարանը արդարացրեց: Այդ գործով ամբաստանյալին պաշտպանում էինք երեք փաստաբաններով, մեր ընկերն էր: Մեղադրանքը պաշտպանող դատախազը ներկայացրեց վերաքննիչ ու վճռաբեկ բողոքներ, սակայն այդ ուղղությամբ արդյունքի չհասավ՝ արդարացման դատական ակտը մնաց ուժի մեջ», - մեզ հետ զրույցում պատմեց Ռուբեն Հակոբյանը:

Նույնն է եղել նաև դարձյալ ՀՔԾ-ի վարույթում քննված Աստղիկ Հովհաննիսյանի գործի պարագայում, որը մեղադրվել է ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար, որը պետությանը խոշոր չափի վնաս է հասցրել: «Դատախազը դահլիճում անմիջապես կալանավորելու միջնորդություն է ներկայացրել և պահանջել 4 տարի վեց ամիս ազատազրկում: Սակայն Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը արդարացրեց նրան, դատախազները բողոքներ ներկայացրին, բայց արդյունքի չհասան», - շարունակեց Հակոբյանը: Նրա մյուս պաշտպանյալներից առանձնապես խոշոր չափերի գողության կազմակերպման համար մեղադրվող Կորյուն Ալավերդյանը 11 ամիս, 11 օր մնացել է կալանքի տակ, մեղադրող կողմը 5 տարի ազատազրկում է պահանջել, բայց դատաարանը նույնպես արդարացրել է, ու նա դատական նիստերի դահլիճից ազատ է արձակվել:

Նրա մեկ այլ պաշտպանյալ Աստղիկ Վարշավչիկի գործով, որը մեղադրվում է պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու համար, այս տարի նույնպես արդարացման վճիռ է կայացվել: «Շատ ուշագրավ գործ էր նրանով, որ մեղադրանքը հիմնված էր մեկ անձի ցուցմունքի հիման վրա: Այդ ցուցմունք տվողը եկավ դատարան ու փոխեց իր ցուցմունքը, և դատարանը արդարացրեց իմ պաշտպանյալին: Մեղադրող կողմը վերաքննիչ բողոք է ներկայացրել: Կարծում եմ, որ առաջին ատյանի դատարանի որոշումը կմնա ուժի մեջ, որովհետև խայտառակություն կլինի, եթե մեկ անձի ցուցմունքի հիման վրա մարդուն դատեն»,- նկատեց փաստաբանը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը նրա կողմից ներկայացված երեք բողոք է ընդունել վարույթ ու բավարարել, ինչը ևս, ըստ Հակոբյանի, դրական ցուցանիշ: Իսկ ինչ վերաբերում է նախաքննության փուլին, ապա նրա վարույթում գտնված 4 այդպիսի գործի քննությունը կարճվել է:

Ընդհանուր առմամբ, Ռուբեն Հակոբյանը 2013 թվականը իր վարույթում գտնվող արդարացման գործերի քանակով աննախադեպ տարի է համարում: 9-ը տարի քննչական աշխատանքից հետո, Հակոբյանն արդեն հինգ տարի է՝ զբաղվում է փաստաբանական գործունեությամբ, որից 2 և կես տարին՝ Հանրային պաշտպանի գրասենյակում է աշխատել, սակայն նման ցուցանիշներ չի գրանցել: «Քննիչ աշխատելու տարիներին, որ լսեի մի գործով արդարացում է լինում, կզարմանայի, հանրային պաշտպան աշխատելու տարիներին 2-3, մաքսիմում

չորս արդարացման գործ, որ լիներ կուրախանայինք: Այս տարի, այո, ես ինձ համար իմ ցուցանիշը անննախադեպ եմ համարում»,- նշեց Ռուբեն Հակոբյանը:

Սակայն այս ամենին զուգահեռ, փաստաբանը փաստում է, որ դատական համակարգը հեռու է անկախ ու օբյեկտիվ լինելուց, օրինակ, այս տարի նրա վարույթում, եղել են գործեր, որոնք ոչ պակաս հիմնավոր էին արդարացման համար, բայց չեն արդարացվել:

Նրա խոսքով, հատկապես «ահավոր սարսափելի» իրավիճակ է որպես խափանման միջոց կալանքը ընտրելու վերաբերյալ միջնորդությունները դատարանների կողմից բավարարելու դեպքերում: «Եթե ասենք հարյուր միջնորդություն է ներկայացվում խափանման միջոցը կալանքն ընտրելու վերաբերյալ, 99-ի դեպքում բավարարվում է: Ցավալի ցուցանիշներ են: Ես որոշակի դրական միտում նկատել եմ, բայց կարող է պատահականությունների բերումով են դրանք եղել: Իմ մյուս գործընկերների հետ շփվելով, իրավակիրառ պրակտիկան տեսնելով, փոփոխություն գրեթե չկա» -եզրակացնում է փաստաբանը:

Նախորդ նորությունը: «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՍՏՈՒՄԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հաջորդ նորությունը: ՎԵՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**Առաջարկվող նորություններ**

22.11.2013ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26.11.2013ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎՏԱՆԳԵԼՈՒ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

27.11.2013ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

**03.12.2013**ԱՐՄԵՆ ԵՍԱՅԱՆԸ
ԿՄԵԿՆԻ ՌՈՒՄԻՆԻԱ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })